

## *Գերաշնորհ Սրբազան Հայր*

### *Հարգարժա՛ն պարոնայք Սպաներ*

### *Միրելի՛ զինվորներ*

Այսօր՝ 2014 թվականի հունվարի 28-ին, մենք պատվով ու ամենայն պատասխանատվությամբ ազդարարում ենք, որ մեր անկախության բացառիկ ձեռքբերում համարվող Հայկական բանակը 22 տարեկան է:

Հասունության, կայացման, կայացած ու հաստատուն լինելու մի բացառիկ տարիք, որն ունի անցյալ, ունի պատմություն, ունի հաղթանակ և որ ամենակարևորն է՝ ունի ապագա:

Ապագա, որը նշանավորվելու է հաղթանակներով և համալրելու է մեր հաղթական բանակի պատմության փառապանծ էջերը:

### *Միրելի՛ զինվորականներ*

Այսօր մեծագույն հպարտությամբ ենք այցելել զորամաս, այցելել ենք շնորհավորելու Հայոց բանակի կազմավորման տարեդարձի առթիվ, շնորհավորելու միմյանց ու համայն հայությանն այս նվիրական օրվա կապակցությամբ ու կրկին անգամ մեծարելու հայ զինվորին, մեր հարգանքն ու երախտագիտությունը հղելու նրան և դարձյալ փաստելու, որ տարածաշրջանի ամենամարտունակ բանակն այսօր բռնել է կայուն զարգացման ու վերելքի մի բացառիկ ուղի:

Այստեղ ես պետք է համոզմունքով մեջբերեմ Հայաստանի Հանրապետության Նախագահ, Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար պարոն Սարգսյանի հայտնի խոսքը, որտեղ հստակ

ասվում է <<Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մեր տարածաշրջանում հավասարակշռության, ուստի և խաղաղության ու կայունության պահպանման ամենակարևոր երաշխավորներից են>>:

Իրավամբ, այդ երաշխավորը լինելը բարդ, բայց միաժամանակ նաև պատվաբեր ու պատասխանատու առաքելություն է, որն այսօր լուրջ ընկալումներով է իրականացնում հայ զինվորը:

Հայ զինվորը, որն ընդամենը օրեր առաջ վերահաստատեց իր անկոտրում ոգու և քաջարի էության ողջ դրսևորումները:

Օրեր առաջ, երբ մերօրյա քաջարի հերոս Արմեն Հովհաննիսյանը դարձավ հայրենասիրության վառ օրինակ:

Փառք ու պատիվ սիրելի Արմենին, փառք ու պատիվ Հայոց բանակի ստեղծման, ձևավորման ու կայացման փուլերում անձնվիրաբար զոհված հերոս տղաներին:

Փառք ու պատիվ հայոց բանակի զինվորներին ու սպաներին, ովքեր բանակաշինության 22 տարիներից յուրաքանչյուրն իմաստավորել են իրենց ներկայությամբ ու գոյությամբ, իմաստավորել են իրենց սխրանքներով և այսօրվա սերնդին փոխանցել տարածաշրջանում ամենամարտունակ բանակի համբավն ունեցող Զինված ուժեր՝ ժամանակակից սպառազինությամբ և հայի մարտական ոգով սոզոգրված, որի հետ հաշվի են նստում շատ-շատերը:

Մենք այս տոնական օրվա կապակցությամբ կրկին վերլուծում ու վերագնահատում ենք հայոց փառապանծ բանակի կազմավորման

ժամանակահատվածները. այսօր կրկին վերհիշում ենք բանակի ստեղծման առաջին պահերի դժվարությունները, վերապրում ենք հայրենիքի կանչով մարտի դաշտ դուրս ելած երկրապահ կամավորականի ուրույն նկարագիրն ու հերոս մահապարտների՝ անսահման հայրենասիրությամբ լեցուն ոգու պողոթյունները: Մենք այսօր կրկին հիշում ենք այն ամենը, որը մեկ բառով բնորոշվում է որպես բանակի կազմավորման ու գոյության առհավատյա:

Մենք, բոլորս, այսօր լցվել ենք մի բացառիկ հպարտությամբ, որին միախառնվում են մեր ազգի ունեցած նվիրական հաղթանակները և ամբողջացնում հայ ժողովրդի հերոսական պատմության հաղթական էջերը:

Ամփոփելով խոսքս՝ կրկին անգամ շնորհավորում եմ բոլորիս Հայկական բանակի կազմավորման 22-ամյա հոբելյանի կապակցությամբ և ցանկանում, որ բանակն ապահովի մեր ժողովրդի խաղաղությունն ու անդորրը:

Փա'ոք հայ ժողովրդին, փա'ոք հայոց բանակին:

Շնորհավորում եմ և ցանկանում ամենայն բարիք...

28.01.2014թ.